ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<28>> սեպտեմբեր 2020թ. N ԱՊՊ/56-2020

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2020 թվականի աշխատանքային ծրագիրը մարզի տարածքում գործող <<Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի և երեք ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքը համակարգելու, ոռոգման ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքը և համակարգի արդյունավետ շահագործումը կարգավորելու նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

1. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/՝ խմբի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ոռոգում - Ջրառ>>փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնաճյուղերի մասնագետներին, ջրօգտագործողների ընկերությունների գործադիր տնօրեններին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին / համաձայնությամբ/:
2. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 30-օրյա ժամկետում և արդյունքների վերաբերյալ պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/ ստուգայցերի և ուսումնասիրությունների ժամանակ թերություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում հարցը քննարկել ջրօգտագործողների ընկերությունների վարչական խորհրդի նիստում, ձեռնարկել գործնական միջոցներ հարցի կարգավորման ուղղությամբ:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /Վ.Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

5. .Սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ պարոն Կ. Գրիգորյանին
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից

Մարզպետ՝ **Հ.Մաթևոսյան**

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/28/2020 14:43:01 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2020 թվականի 28 փետրվարի-ի
ստ/58-Լ որոշման

ԽՈՒՄԲ

Խմբի ղեկավար՝
Ա. Այվազյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Անդամներ՝
Գ.Մելիքյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի պետ

Վ. Միրզախանյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Մարգարյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

Մ.Մաբիբեկյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, գյուղատնտեսության բաժնի պետ

Ս.Մխիթարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ **Վ.Վարդազարյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 28.02.2020 11:21:47 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217